Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-798-15.03.2024-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-րդ և 23-րդ մասերով.

«22. Բյուջետային ծրագրի գնահատումը ծրագրերի և միջոցառումների համակարգված, օբյեկտիվ և բազմակողմանի վերլուծությունն է՝ վերջիններիս արդյունավետությունն ու արդյունքայնությունը բացահայտելու նպատակով:

23. Արդյունքայնությունը ցույց է տալիս, թե իրականացված ծրագրերն ու միջոցառումները որքանով են ապահովել նախատեսված նպատակները և վերջնական արդյունքները:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական բյուջեի կատարման հսկողությունը, վերահսկողությունը և բյուջետային ծրագրերի գնահատումը».

2.) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Բյուջետային ծրագրերի գնահատումն իրականացնում է պետական լիազորված մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կառավարությունը սահմանում է բյուջետային ծրագրերի գնահատման իրականացման կարգը:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 22-րդ եւ 23-րդ մասերով.

«22. Բյուջետային ծրագրի գնահատումը ծրագրերի եւ միջոցառումների համակարգված, օբյեկտիվ եւ բազմակողմանի վերլուծությունն է՝ վերջիններիս արդյունավետությունն ու արդյունքայնությունը բացահայտելու նպատակով:

23. Արդյունքայնությունը ցույց է տալիս, թե իրականացված ծրագրերն ու միջոցառումները որքանով են ապահովել նախատեսված նպատակները եւ վերջնական արդյունքները:»:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Պետական բյուջեի կատարման հսկողությունը, վերահսկողությունը եւ բյուջետային ծրագրերի գնահատումը».

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. ~~Պետական բ~~Բյուջետային ծրագրերի գնահատումն իրականացնում է ~~կառավարության անունից~~ պետական լիազորված մարմինը՝ կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3. ~~***Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ***~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Կառավարությունը սահմանում է ~~պետական~~ բյուջետային ծրագրերի գնահատման իրականացման կարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-798-15.03.2024-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Վերնագրում	Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառն առաջարկում ենք փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում կատարել մի քանի լրացում: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, այն է. «Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը»:	Առաջարկությունը ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում	Նախագծի 1-ին հոդվածում «1.2» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «1.2-րդ» ձևակերպմամբ՝ դասական	Առաջարկությունը ընդունվել է	Ընդունվել է

			թվականների ճիշտ գրելաձևը ապահովելու նպատակով:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «գնահատումը» բառից առաջ լրացնել «բյուջետային ծրագրերը» բառերը՝ տարընկալումները բացառելու նպատակով, քանի որ տվյալ ֆինանսական տարում բյուջետային ծրագրերի գնահատումը ենթադրում է որոշակի՝ ընտրանքային ծրագրերի՝ այլ ոչ թե բոլոր բյուջետային ծրագրերի գնահատումները:	Առաջարկությունը ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ, 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի երկրորդ հոդվածի 2-րդ կետով լրացվող նոր 4-րդ մասում և Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Պետական բյուջետային ծրագրեր» բառերը փոխարինել «Բյուջետային ծրագրեր» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, որով սահմանված է. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:	Առաջարկությունը ընդունվել է	Ընդունվել է

5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի երկրորդ հոդվածի 2-րդ կետով լրացվող նոր 4-րդ մասում «կառավարության անունից լիազոր մարմինը» բառերը փոխարինել «պետական լիազորված մարմինը» բառերով: Փոփոխությունը պայմանավորված է «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 1.2. Հոդվածի 13-րդ մասով, համաձայն որի «Պետական լիազորված մարմինն է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) լիազորած պետական կառավարման մարմինը»:	Առաջարկությունը ընդունվել է	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագրում	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագրում «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Առաջարկությունը ընդունվել է	Ընդունվել է